

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի

Ղեկավարի 2014թ-ի տարեկան

Ես՝ որպես Այգեշատ համայնքի ղեկավար, ներկայացնում եմ համայնքում կատարված աշխատանքների մասին:

Տարեսկզբին ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեն, որի կատարմանը սահմանված կարգով կատարվում է հսկողություն:

Համայնքի հասարակական կարգի պահպանման համար սահմանվել է հսկողություն գիշերային ժամերին, որը իրականացվում է ինչպես ավագանու անդամների, այնպես էլ աշխատակազմի միջոցով: Այս աշխատանքների շնորհիվ բավականին պակասել են անկարգություններն ու զոդությունները: Աստիճանաբար հաստատվում է կարգապահությունը համայնքում:

Համայնքի փողոցների բոլոր խաչմերուկներում անցկացվել է գիշերային լուսավորություն:

Նոր-տարին դիմավորելու համար զարդարվել է համայնքի հրապարակում գտնվող հուշարձանին հարակից եղննիները:

Տարեսկզբին նոր-տարվա առիթով կազմակերպվեց Ձմեռ պապու այցելությունը բնակիչների տները և 1-ից մինչև 6 տարեկան երեխաներին բաժանվեց նվերներ:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի շնորհիվ փետրվարի 13-ին Տյարն ընդառաջի տոնի կապակցությամբ կազմակերպվեց միջոցառում համայնքի թվով 15 նորապսակների եկեղեցում կատարվեց ծիսակատարության կարգը այնուհետև արարողությունը շարունակվեց

համայնքի կենտրոնում արարողակարգի համաձայն, նորապսակներին բաժանվեցին նվերներ:

Գյուղապետարանի աջակցությամբ դպրոցի ուսուցչական և աշակերտական կազմը, ինչպես նաև համայնքից այլ բնակիչներ ապրիլի 24-ին այցելել և ծաղկեպսակ են դրել Մեծ եղեռնի զոհերի հուշարձանին:

Մայիսի 9-ին՝ հաղթանակի օրվա արթիվ կազմակերպվել է միջոցառում, որի ժամանակ պարզևատրումներ է հանձնվել հայրենական պատերազմի վետերաններին:

Գյուղապետարանի միջոցներով կառուցվում է բուժկետ, որի շինարարական աշխատանքները շարունակվում են մինչ օրս:

Բավականին աշխատանք է կատարվել պաշտպանության բնագավառում: 2014թ-ի գարնանային և ձմեռային զորակոչի համար ավտոդպրոցում նախապատրաստվել և զորակոչվել են 10 զորակոչիկ, և մեկնել են զինծառայության: Հաշվետու տարում համայնքում կատարվել է կենդանիների համաճարագային պատվաստումները հատկապես խոզի գրիպի դաբաղի և բրոցիլոզի դեմ: Կազմակերպվել և այժմ էլ կատարվում է աղբաթափություն ամիսը 4-անգամ շաբաթական 1-օր:


Կատարվել է համայնքի փողոցների լայնացման և մաքրման աշխատանքներ:

Այսքան կատարված աշխատանքների հետ մեկտեղ կան նաև որոշակի դժվարություններ, որոնք խոչնդոտում են գյուղատնտեսության զարգացմանը: Գյուղատնտեսական ապրանքների իրացման հարցում կան դժվարություններ հիմնականում արտահանման հարցում:

Առ. 31.12.2014թ-ի դրությամբ բյուջեն կատարվել է 99% ուվ

հողի հարկ -----5400.0	կատարողական----5402.2
գույքահարկ-----3300.2	կատարողական----3306.4
շինություն----- 100.0	կատարողական----100.7
փոխադրամիջոց-----3200.2	կատարողական---3205.7
վարձակալական հողերի վարձ-1100.0	կատարողական---900.8

Այգեշատի գյուղապետարանի
առաջատար մասնագետ՝



Գայանե Մկրտչյան

Այգեշատ համայնքի ղեկավար՝



Ռոբերտ Հովսեփյան